ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 5-ԱՄՅԱ

ԵՐԵՎԱՆ 2016

№-09/2101-16
28.04.16թ

Ի.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 12.07.1993թ., իսկ վերակազմակերպվել է 22.03.2005թ.: Կազմակերպության գրանցման վկայականի համարն է 03 Ա 068510:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության նպատակներն են.

1. Նպաստել ՀՀ հոգևոր, մշակութային, սոցիալական և տնտեսական զարգացմանը,
2. նպաստել տարեցների, հաշմանդամների, փախստականների և այլ խոցելի խմբերի կյանքի որակի բարելավմանը, առողջ և արժանապատիվ ապրելակերպին՝ ներդնելով և զարգացնելով համայնքահեն սոցիալ-առողջապահական ծառայություններ,
3. նպաստել տարեցների, հաշմանդամների, փախստականների սոցիալական իրավունքների ապահովումը՝ նրանց կենսամակարդակի և սոցիալական բարեկեցության բարելավման նպատակով,
4. նպաստել աղքատության հաղթահարման և սոցիալական ապահովության համակարգի բարելավմանն ուղղված գործունեությանը,
5. աջակցել սոցիալական սեկտորում բարեփոխումների իրականացման առաջընթացին՝ ստեղծելով և ներդնելով հասցեական սոցիալական ծառայությունների արդյունավետ մոդելներ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության խնդիրներն են.

1. Սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների և այլ անապահով խմբերի առաջնային սոցիալական խնդիրների լուծումը՝ սոցիալ-առողջապահական ծառայությունների մատուցման միջոցով,
2. Աջակցել գործազուրկ և սոցիալապես անապահով աշխատունակ քաղաքացիների՝ աշխատանքային շուկայի արդի պահանջարկին համեմատ մասնագիտական կրթություն ստանալուն և/կամ վերառրակավորմանը /վերամասնագիտացմանը/՝ նրանց դարձնելով մրցունակ աշխատանքի տեղավորման հարցում և նպաստելով նրանց անապահով վիճակից ինքնուրույն կերպով դուրս գալուն և ինքնաբավ դառնալուն,
3. Բարելավել բնակչության կարիքավոր համայնքների և սոցիալապես խոցելի խմբերի կյանքի պայմանները բարձրացնելով սոցիալական ծառայությունների որակը և մատչելիությունը

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

1.3 Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.
Համայնքային կենտրոնը համալրված է փորձառու աշխատակազմով՝

Վանաձորի ՀԿ	Աշխատակիցների քանակ
ՀԿ տնօրեն	1
Հաշվապահ	1
Վարորդ	1
Սոցիալական աշխատող	2
Բժիշկ	1
Բուժքույր	1
Խնամող	1
Դոնապան	2
Մենթոր	1
Վանաձոր ԲՃ	
Խոհարար	1
Մատուցող	3

1.4. Կազմապերպության գործունեության ոլորտը

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության գործունեության ոլորտներն են.
1. սոցիալական
2. առողջապահական,
3.իրավաբանական
4. սոցիալ-մշակութային
5. ուսուցողական-կրթական
6. մարդասիրական

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1. Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել՝

Նպաստել համայնքում սոցիալական պաշտպանության կատարելագործման բարելավմանն ու կայունությանը՝ արձագանքելով քաղաքացիների կարիքներին եւ խնդիրներին:

Ծրագրի նպատակը համապատասխանում է ՀՀ կառավարության 2012-2017թթ ծրագրում ամրագրված սոցիալական քաղաքականության սկզբունքներին եւ հետեւյալ դրույթներին՝

3.2.1. Սոցիալական քաղաքականությունը

- միայնակ տարեցների և խնամքի կարիք ունեցող հաշմանդամների համար իրականացնելու է խնամքի, սպասարկման, խորհրդատվության, իրավաբանական օգնության տրամադրման ծրագրեր՝ սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրման միջոցով,

- շարունակելու է իր ջանքերը՝ սահմանափակ հնարավորությամբ անձանց համար լիարժեք կյանքով ապրելու պայմաններ և հնարավորություն ստեղծելու ուղղությամբ:

2.2. Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 5 (հինգ) տարում կազմակերպության գործունեության կազմակերպման ներդրումը հետևյալ է՝

Հազ.դրամ

Նկարագիր	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Աշխատավարձ	10,528.0	10,380.0	10,587.6	10,799.4	11,015.3
Սննդամթեք, հիգիենիկ նյութեր, դեղորայք	6,270.0	4,506.0	4,596.1	4,688.0	4,781.8
Պահպանման, շահագործման ծախսեր	1,272.0	1,272.0	1,297.4	1,323.4	1,349.9
Ընդամենը	**18,070.0**	**16,158.0**	**16,481.2**	**16,810.8**	**17,147.0**

Ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. ՀՀ կառավարության կողմից հատկացված ֆինանասական աջակցությունը,
2. Ճապոնիայի Սոցիալական Զարգացման Հիմնադրամից, Համաշխարհային բանկի միջոցով տրամադրված դրամաշնորհը,
3. Վանաձորի քաղաքապետարան:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 5 (Հինգ) տարի ժամկետով:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա հինգ տարում «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումներ.

1. Սոցիալ-առողջապահական ծառայությունների մատուցում ցերեկային կենտրոնում (այսուհետ՝ ՑԿ) և տներում,
2. սննդի տրամադրում ՑԿ-ում,
3. տնային խնամք և կենցաղային սպասարկում,
4. տարեցների ուսուցում՝ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում ՑԿ-ում և տներում,
5. ակտիվ հանգստի, ժամանցի և մշակութային միջոցառումների կազմակերպում ՑԿ-ում,
6. քաղաքացիների տեղեկացվածության բարձրացում սոցիալական ոլորտում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ,
7. ինտեգրված սոցիալական ծառայությունների մշտադիտարկում,
8. քաղաքացիների մտահոգությունների վերհանում, ամփոփում և ներկայացում համապատասխան մարմիններին,
9. շահերի պաշտպանություն և քարոզչություն,

2.4. Ծրագրի իրականացման համար ակնկալվող արդյունքը

10. Սույն ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը կարձանագրի հետեւյալ արդյունքները եւ ազդեցությունը՝
11. Ծրագրում ընդգրկված խոցելի խմբերի (ծերեր, փախստականներ, հաշմանդամներ, բազմազավակ ընտանիքներ, գործազուրկներ, և այլն) սոցիալական, առողջապահական, սննդի և խնամքի բազմապիսի կարիքների արդյունավետ բավարարում՝ ըստ իրենց անհատական կարիքների:
12. Անհատական և հասցեական կենսականորեն անհրաժեշտ ծառայությունների մատուցման շնորհիվ ծրագրի թիրախ խմբերի սոցիալ-առողջապահական վիճակի բարելավվում:
13. Թերսնուցումից, հիվանդություններից, սոցիալական ծանր վիճակից բխող բացասական հետևանքների մեղմացում և շահառուների աստիճանաբար վերաինտեգրումը համայնքային կյանքին